

մեռում են իսկ թիւ 5-ը մար և շարունակում սովորական դանդաղ և անօգուտ գործունէութիւնը. այս վատ է, սա դառնում է նախանձութիւն և չըկամութիւն, որին զորում են հասարակաց գործի առաջնորդութիւնը:

Կիցուք նորերը մի անարդար գործ կամ միտք են պաշտպանում. դարձանում են և յանդիմանում. աշխարհայ պատասխանում են. «Կիտե՛ք» որ ծուռ ենք անում, բայց պէտք է մինչև վերջը տանենք, որ յաղթված չը համարվենք...» Այս անս ևս վատ է. յաղթվել և յաղթվել է բաւական չը պէտք է լսվեն այնտեղ ուր սէր և միջաբանութիւն պէտք է թագաւորեն: Թէ ինչերի և թէ նորերի մէջ կան սակաւթիւ անձինք, որոնց անաշուտութիւնը, անկեղծութիւնը և խելացի ու անխնայ աշխատասիրութիւնը պատիւ կարող են բերել ամենալաւ հասարակական գործակատարին, բայց գովութեան անարժանիքի թիւը մեծ է, որոնք և պատճառ են ամեն անշարժութեան և երկպառակութեան:

Հետագոյնով հասարակութեան տրամադրութիւնը և տեղական բազմազան հանգամանքները մենք մեծամեծ պահանջներ ունենք առաջիկայ ընդէ. Ժողովից, որոնց նա պարտաւոր է լրումն տալ հիմնաւոր դատողութեամբ:

Ընդհ. Ժողովը նախ պարտաւոր է իր համար մի այնպիսի նախագահ ընտրել, որը հեղինակութիւն և հմտութիւն ունենայ մինչև վերջ իր նիստերը կառավարելու. այս նախագահից շատ բան է կախված, որ անաշուտութիւնը ու ճշգրտութիւնը, կամ թուլութիւնն ու երկրորդութիւնը զգալի հետեւանքներ կունենան Ընկերութեան գործերի վերաբերութեամբ:

Ընդհ. Ժողովը ամենազլխաւոր հոգալիքն այս անգամ խորհուրդի անդամներին և նախագահին ընտրութիւնն է անշուշտ: Խորհուրդի այժմեան կազմումը այլ ևս համապատասխան չէ ներկայի պահանջին. ուստի նա անպատճառ պէտք է բոլորովին փոխվի. Հիներին վատ մարդիկ չենք ասում, լաւ են, շատ լաւ են, բայց 10—15 տարի շարունակ ընտրվելով և մնալով, իսպառ ճանաչուցել են, յոգնել և թուլացել. ինչ գիտէին արեն, որքան կարող էին գործեցին, ուսման գիւմելու էին դիմեցին, այլ ևս անելիք չունեն: Այս սուսեւտն պէտք է նորերին ընտրել, թաւալ ոյժերին առաջ քաշել, որ նրանք էլ իրանց հոգին ար քոյց տան: Մի անգամ մի ուսումնարանում հոգաբարձուների ընտրութիւն կար, երբ ժողովուրդը միաբերան աղաղակում էր, որ որդեկեղ հիները մնան (երկրորդ թէ երրորդ անգամն էր) նրանցից մինը ասաց. «Նշեալներ, չնորակալ ենք, որ մեզ այդքան հաւատում և յորդում էք, բայց իմ կարծիքով դա ձեզ վնաս է. միշտ մեզ ընտրելով 3—4 մարդ կունենաք միայն դպրոցների կարիքը իմացող, իսկ թէ երեք տարին մէկ անգամ բոլորովին նորերին ընտրէք, այն ժամանակ հասարակութեան ցաւը շատերին յայտնի կը լինի, դպրոցների հիմքը կամրանայ: Խորհուրդ կը տամ ձեզ ուրիշներին ընտրել, թող ամենքն ընտելանան և վարժվեն հասարակաց գործերում, դա ձեզ օգուտն է»: հոգով կը փափաղէինք, որ դալու ընտրութիւնների ժամանակ ընկ. խորհուրդի պատւելի անդամներն ևս նոյնպէս ասէին և հաստատ մնային իրանց ասածի վրա, թէ և ժողովը դարձեալ իրանց ընտրէ: Հարկը պահանջում է, որ հիները իրանց յօժար կամքով ասպարէզը յանձնեն նորերին և այնուհետև ոչ թէ իսպառ հեռանան և անտարբեր աչքով նային նրանց բռնելի ընթացքին, այլ ընդհակառակն վերահսկեն անդադար և անաշուտապէս գնահատեն նրանց գործունէութիւնը, որպէս զի չը թմրեն և անօգուտ չը չլինեն իրանց պաշտօնը: Եթէ այսուհետև նորերը նոր եռանդով գործեն հիները պէտք է շատ ուրախ լինեն, որովհետեւ արանց հիմքի վրա են չինելու նրանք, այն հաստատութեան համար են աշխատելու որի արժատանալու և պողարքը լինելու մասին իրանք ևս այնքան հոգացել են և խնամք տարել երկար տարիներով: Միւս կողմից նորերը հրապարակ դալով՝ չը պէտք է պարծենան կամ հպարտանան իր թէ յաղթեցին կամ կործեցին հիների յամառութիւնը. ունայն խօսքերը ատելութիւն և անվերջ վէճեր արծարծելուց զատ՝ մի քորչի օգուտ չեն կարող բերել. ճշմարտ յաղթութիւնը գործով և հիմնաւոր ձեռնարկութիւններով կարելի է փաստակել: Եթէ նորերը վեճիմարութեանց կամ փառասիրութեանցից զրոյթած են առաջ դալով՝ ապա լաւ կը լինի, որ տեղները ծանր նստեն ու ի զուր չը թեթեւանան միանգամայն, որովհետեւ նրանց պատասխանատուութիւնը ահապէս է լինելու և մենք աս-

մենայն իրաւամբ արանցից աւելի ենք պահանջելու քան իրանց նախորդներին:

Անցեալ ընդհ. ժողովները գրեթէ միշտ նահապետական ձևով են եղել. նշանակած ժամանակին սակաւաւոր անձինք հաւաքվել են և մի գիշերում բոլոր գործերը վերջացրել ու ցրվել, առանց հիմնաւորապէս քննելու և հետաետութեամբ որոշելու նախորդ և յաջորդ տարիների գործերը: Բայց ինչ խորհուրդ ունի այնքան չը տալելը, թիւ է ստիպում անպատճառ մի գիշերում վերջացնել: Այս անգամ ընդհ. ժողովը մի քանի նիստեր որ ունենայ՝ շատ լաւ կը լինի. թող առաջին նիստում մի մասնաժողով ընտրեն և յանձնեն նրան խորհուրդի հաշիւները և գործողութիւնները մանրամասն քննել և առանձին տեղեկագրով գեկուցանել ժողովին, որպէս զի նա կարողանայ գիտակցաբար և ոչ կուրօրէն վաւերացնել և գնահատել անցածը. կանոնադրութեան 29-րդ օրոգում ևս պահանջում է ընկ. գումարների պահպանելու և գործածելու կանոնաւորութեան վրա առանձին ուշք դարձնել:

Ընդհ. ժողովում ընտրութիւններն անելիս և հարցերը վեճելիս նախագահը պարտաւոր է հրսկել, որ բոլոր անդամներին, առանց բացառութեան, միջոց տրվի իրանց կարծիքը հերթով և ազատօրէն յայտնելու և պաշտպանելու, և ոչ թէ մի քանի շատախօսներ և փողաւորներ ինքնացուցութեան և փառամոլութեան կիրքով առաջ անցնեն, աղմուկ անեն ու ջնջել թաղար չինեն նրանք, իսկ բազմութիւնը սուս նստէ, թէյ խմէ և աղաների ծափով պար դալ ու գնայ, էլ ինչու են գնում, եթէ այնպէս է լինելու:

Ընդհ. ժողովը նոր ընտրելի խորհուրդին պէտք է յատկապէս պարտաւորացնէ մեծ ճշգրտութեամբ և օրինաւորութեամբ վարվել Ընկերութեան պատկանելիքը հիներից ստանալու և ոչինչ չը թողնել առանց արձանագրելու, որովհետեւ ժողովուրդի մէջ տրուումը կայ՝ իբր թէ Ընկերութեան գրադարանը և այլ ստացուածներ անհոգութեանց ցրված և յափշտակված են ոմանցից: Կանոնաւորութեան (օրգ. 14), պարբերութիւնը գործութեամբ անդամները իրաւունք ունեն Ընկերութեան գործերի կարգադրութեան վերաբերելու իրանց կողմագտութիւնները առաջարկել բերանացի կամ գրով: Ուստի խորհուրդ եմ տալիս ընկ. բոլոր մեծաւոր և հեռաւոր անդամներին օգուտ բաղել այս իրաւունքից և պատրաստվել ընդհ. ժողովում դանազան հարցեր զարթեցնելու և օգտուած կարծիքներ յայտնելու, որոնց կարծի է Ընկերութեան առաջադրմութիւնը և բարեկարգութիւնը:

Ընդհ. ժողովը լաւ կ'անէ՝ եթէ այս անգամ խորհրդի նախագահին օգնական և անդամներին մի մի փոխանորդներ (կանգիւղատ) ընտրէ. յաճախ պատահում է՝ որ անդամների բացակայութեան կամ հիւանդութեան պատճառով խորհուրդի նիստերը շարաւիթնով (երեմն ամիսներով) դադարում են. այսպիսի դէպքերում փոխանորդները մնացած անդամներին հետ նիստեր կը կախացնեն ու անխնամ մնացած գործերին ընթացք կը տային. Բացի ստանցից փոխանորդները միշտ օգտակար կը լինեն անդամներին թէ խորհուրդ և թէ այս տեսակ գործակցութեամբ:

Լուում ենք, որ ընկ. պատուարժան խորհուրդը այժմեանից սկսած պատրաստութիւններ է տեսնում ընդհ. ժողովի համար և մտադիր է նրա նիստերին օրինակելի կանոնաւորութիւն տալ. շատ ուրախ ենք այս մասին, միայն ցանկալի է, որ բարեհաճէին չուտով աղաբարականքներ ուղարկել և լրագրիներով յայտարարել ժողովի օրը, գուցէ ընկ. հեռաւոր անդամներինց ոմանք կը ցանկանան անձամբ ներկայանալ և մասնակցել ընդհ. ժողովի գործողութիւններին:

Կասպիաքի

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

14 դեկտեմբերի

Ներկեցէ՛ք ինձ որ իր ժամանակին անկարող եղայ տեղեկութիւն տալ թեմական տեսուչ Ալվազեան վարդապետի գործունէութեան վերաբերութեամբ: Մինչև այժմ այդ նիւթի մասին չը գրելուս պատճառը այն էր, որ ձեր մշտական թղթակցները մէկը յայտնեց ինձ, որ նա գրելու էր այդ նիւթի մասին: Մինչև այսօր ոչինչ չեմ տեսնում «Մշակի» մէջ, որպէս զի կատարեմ խմբագրութեանը դէպք ինձ ուղղած պատասխանը. ես այսօր եթէ ոչ լրովին, գէթ կիսով չափ մի հայեացք եմ դրում նրանի թեմական տեսուչ

հայր Ալվազեանի գործունէութեան վրա: Մի անձն որ վարում է նրանի պրօգրիմադրայի հայ լեզուի և կրօնի ուսուցչութեան պաշտօնը, անաշույն իսկ այդ անձն է մեր թեմական տեսուչը: Միանգամայն անյարմար և ծիծաղելի է երևում հոգեւոր կառավարութեան արած կարգադրութիւնը. կամ տեսուչ կամ ուսուցիչ, երկուսից մէկը պէտք է թողնել: Հայր Ալվազեանը որպէս ուսուցիչ չունի իրաւունք ոտքը քաշալից դուրս դնելու, ուրեմն նրանի թեմական տեսուչութիւնը լոկ երեկոյական մի անուն ունի: Մենք գիտենք որ այն օրից երբ յիշեալ վարդապետը յանձն է առել այդ պաշտօնը, նրա գործունէութեան մէջ չէ նշմարվում մի խոշոր կէտ, նա չէ գործել այնքան որքան կարելի է պահանջել: Մենք ոչ թէ իրաւունք ունենք, գուցէ մեղանշելու լինենք եթէ պահանջենք, որ հայր Ալվազեանը այդչափ դանդաղ է շարժվում: Եթէ էլ միայնակ հոգեւոր կառավարութեան նշանակած տեսուչը ոչ թէ լոկ ձեռն համար է, այլ ուսումը և դաստիարակութիւնը թեմի մէջ տարածելու համար, նախ և առաջ պէտք է նրան ազատ կացուցանել ուսուցչական պաշտօնից, նրան ուսման և ճանապարհածախս նշանակել, որոնք այնքան անհրաժեշտ են, որքան հացը քաղցածութեան ժամանակ: Այդ ամենակարեւոր կարգադրութիւններից չը կայ ոչ մինը, գուցէ չը սխալվեմ եթէ ասեմ որ հայր Ալվազեանից հաշիւ պահանջելու իրաւունք չունենք: Նրա թեմական տեսուչութեան վերաբերութեամբ, Չը նայելով այս ձախորդ հանգամանքներին, որոնք ենթակայ է նրանի թեմական տեսուչը, այնու առմենայնիւ նա միանգամայն չէ արժանաբերել և զանցաւորութեան տուել այդ պաշտօնը: Նրա աշխատութեամբ մի քանի տեղ բացված ծխական դպրոցների վրա, ես կաշխատեմ գրել մի այլ անգամ:

Ա. Նր.

ՆԱՄԱԿ ԽՍԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 20 դեկտեմբերի

Արդէն ձեր յարգութեան յայտնի է այն զրգադրութիւնը, որ մի երկու տարի սրանից առաջ պատահեաւ Զաքարիայ քաղաքի մէջ: Զեք յայտնի է որ մի ամառվայ պարզ օր քաղաքի մի անկիւնից բարձրանում է ծուխ և դեռ ժողովուրդը չը հաւաքված այնտեղ, ծուխը դառնում է բոց և մինչև դրա հանգցնելը կաշում է երկրորդ, երրորդ տներին և մի քանի ժամի մէջ այդ փոքրիկ ու գեղեցիկ քաղաքը, — Լեզգիստանի արկղը, դառնում է հրոյ բաժին: Կրակը լափում է մէկ տունը միւսի ետեւից, խանութները բոլորը անհետանում են և մի քանի ժամից յետոյ մնում են չինութիւնների միայն ժանգոտած առանքները. մէկ խօսքով այն մարդը որ մի քանի ժամ առաջ իրան հարուստ էր կարծում, այն անձը որ երբեք մտքով անգամ չէր երազում որ պիտի ուրիշ կարօտութիւն ունենայ, այն մղձառոր, որ իր մերկութիւնը ծածկում էր միայն իսկուրի տակ, մնում են բաց երկնքի տակ զրկված այն բոլորից ինչ որ ունէին թէ տուն ու անային կայք, թէ խանութ ու կարողութիւն այդ բոլորը կլանվում ու անհետանում է ապաւած ժողովուրդի աչքի առաջից... Ահա, պարոն խմբագիր, այդ խեղճ ժողովուրդի ներկայացուցիչները — նրա, երկուսն ուսումնաբանների հոգաբարձութիւնը, այս դեկտեմբերի 4-ից գիմելով ինձ ուղարկել է մի ծագաւոր նեալ տետրակ, և յայտնում է որ ժողովուրդը անցեալ թղուտութեանց գոյնիկով խեղճալի դրութեան մէջ չէ կարողանում օգնել իր ուսումնարանները շարունակելու համար և յանձնում է ինձ որ ստորագրութիւն առաջարկեմ տեղիս հասարակութեանը, որպէս զի ամեն մի մարդասէր նպատաստանոց լինի նրանց խղճալի դրութեանը:

Յայտնելով յարգելի լրագրիդ միջոցով, խնդրում եմ ամեն մի մարդասէր անձի պարզել իր ձեռք օգնելու այն հասարակութեանը, որ թշուառացել է միայն բնութեան հարուածից: Թող ամեն մի մարդ իր նուիրատուութիւնը ուղարկէ կամ ուղղակի ինձ վրա և կամ Զաքարիայ հայոց հոգեւոր դպրոցների հոգաբարձութեան անունով:

Աղէք. Մէլքե-Փաշայեանց

ՆԵՐՍԷՍ ԼՈՐԵՐԵՐ

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» ներկայ տարվայ

բաժանորդագիրը, ուղարկեն նրան խմբագրութեանը:

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ գրքերը. «Исторический очерк развития и устройства Кавказских минеральных водъ» сост. докторъ медицины М. Милютинъ, և «Անապատում» վ. Օ. Հօրնի, Թարգ. օր. Նունէ Տէր-Աստուածատրեանց:

Մեզ գրում են հետեւեալ. «պ. Ա. Արծրունու խորհրդի համաձայն ՂՈՒԲԱՅԻ շրջականերում սկսել են ծխախոտի վարուցանքը: Փորձերը ցոյց են տալիս, որ ցանողները օգուտներ կունենան: Այս տարի Ղուբայում մօտ 2000 պուղ պատրաստ ծխախոտ կայ: Ասում են, որ ամենալավ պուղ ցանքերը պ. Բաճաթրեանցի և գերմանացի պ. Ա. Բերնստինին են»:

ԲԱԳՈՒԻ «Մարդասիրական ընկ.» նախագահը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Ողորմած տէր, «Մարդասիրական ընկերութեան» խորհրդական անդամաց պաշտօնակատարութեան երեք տարվայ ժամանակը յառաջիկայ 1879 թիւ յունվար ամսին վերջանում է: Անդամ համաձայն 17-րդ օրգ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ կանոնադրութեան պարտաւոր են հրաւիրել Ընկերութեան բոլոր անդամներին, որ ընդհանուր ժողով կազմեն Ընկերութեան գործից կառավարութեան համար՝ նոր նախագահ և խորհրդական անդամներ ընտրելու. ուստի խորհուրդը խոնարհաբար խնդրում է ձեզ, ողորմած տէր, չնորս բերել ի 26 յունվարի 1879 ամի յետ կէս աւուր ի 5-րդ ժամու, ներկայանալ ընդհանուր ժողովում, որ պիտի լինի Ընկերութեան ուսումնարանի դահլիճում, որպէս անդամոց տարւոյս հաշիւը քննելու նմանապէս և նոր անդամներ ընտրելու»:

ԱՅՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՍ

4. Պօլից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը:

«Յունաստանի նոր սահմանները որոշող մասնաժողովը համար սուլժանը արդէն նշանակեց իր հաւատարմատարներին, որոնցից մէկը Ահմէդ Մուխտար-փաշան է, իսկ միւսը Վահան-էֆենդին: Այդ երկու հաւատարմատարները ունեն և օգնականներ: Այս կարգադրութեան մասին տեղեկութիւն է տուած ինչպէս յունաց դեսպանին 4. Պօլսում, նոյնպէս յունաց կառավարութեանը: Այժմ Բ. Գուռը այդ կարգադրութեան մասին պատասխանի է սպասում յունաց կառավարութեանց, որպէս զի պաշտօնապէս հրատարակել հաւատարմատարների նշանակելը և նրանց պատուէր տրվի յարաբերութիւններ կապել յունաց հաւատարմատարների հետ: 4. Պօլի յոյն ազգաբնակութիւնը, որ ծանօթ է թէ Բ. Գրան և թէ Աթենքի կառավարութիւնների իսկական տրամադրութեան հետ, այդ կարգադրութիւններին ոչինչ նշանակութիւն չէ տալիս և յոյս չունի, որ սահմանների ուղղելու հարցը շուտով վճռվի: Բ. Գրան և Յունաստանի հայեացքները սահմանների մասին ինչպէս երևում է, շատ են տարբերվում միմեանցից:

Մի և նոյն հարցի վերաբերութեամբ «Times» լրագրի թղթակիցը գրում է Վիեննայից հետեւեալը:

«Թիւրքիան վճռել է Յունաստանին շատ հողեր տալ Թէսսալիայում, միայն թէ Ե. պիթոսը ամբողջութեամբ պահէ իր համար, մանաւանդ այն պատճառով, որ Բ. Գուռը հարկաւոր է համարում իր ձեռքին ունենալ Արտո և Պրիվեզա նաւահանգիստները, որոնք անհրաժեշտ են Ներքին-Ալբանիայի հետ անընդհատ յարաբերութիւններ պահպանելու համար: Եթէ Բ. Գուռը կը զօրկել այդ երկու նաւահանգիստները, նա ժամանաւոր կը կորցնէ և ծանրանալ եթէ թիւրքերը չեն ունենայ այդ երկու նաւահանգիստները

նորս անջատված կը լինեն ծովից և եթէ յոյները և միւս քրիստոնեաները Ալեքսանդրիայէն ապստամբվին, որ շատ հաւանական է, թիւրքերի դրութիւնը Եպիքրոսում անտանելի կը լինի: Թիւրքերի կարծիքով սահմանների ուղղելը մտադրված է ինչպէս միջոց վերջ տալու անդադար կրկնվող ապստամբութիւններին: Իսկ այդ նպատակին կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ սահմանը կանցնի դէպի հիւսիս մինչև այն երկրները, որոնք բնակեցրած են բուն յոյն ազգաբնակչութեամբ: Իսկ եթէ, Յունաստանի ձեռքը կրկնի և Եպիքրոսի մի բաժինը, որ բնակեցրած է մասամբ յոյներով և ալբանացիներով, մասամբ քրիստոնեաներով և մահմետականներով, այն ժամանակ անպատճառ ապստամբութիւն կը ծագի: Յոյները որ նոյն կարծիքի են այնու ամենայնիւ պնդում են, որ սահմանները ուղղվին երկու նահանգներուն մէջ:

ԱՄԵՐԻԿԱ

«Temps» լրագրում Ամերիկայի ընտրութիւնների մասին կարդում ենք հետևեալը. «Նոյեմբերի 5-ին կայացած ընտրութիւնները դարձեալ երկու հին կուսակցութիւններ յառաջ բերին, այսինքն հանրապետականներին և Դեմոկրատականներին: Ազգային կոչված կուսակցութիւնը, որի մէջ մտնում են նոյնպէս գործաւորների մի մասը, սօցիալիստներ և կոմունիստներ, ընդհանուր մըրցման մէջ բնաւ չէր էլ նշմարվում, այնքան փոքր էր դրա թիւը: Գնենալ Բիւտլըրը, որ այս կուսակցութեան համար պատերազմում էր Մասսաչուսեթսում, մինչև անգամ իր նպատակին էլ չէ հասաւ, որովհետև կառավարիչը նշանակեցաւ այս նահանգի վրա: Ընդհանրապէս կարելի է ասել որ հանրապետականները մեծամասնութիւն ստացան ընդհանուր խորհրդի ժամանակ, բայց եթէ երկրի աշխարհագրական բաժանումներն նայենք, գրեթէ ոչինչ առանձին փոփոխութիւն չենք նկատի, որովհետև դարձեալ առաջվայ պէս հիւսիսային և կենտրոնական նահանգները հանրապետական են, իսկ հարաւային և արևմտեան մի մասի նահանգները Դեմոկրատական:

Նիւ-Իորկում կարելի է ասել որ Դեմոկրատականները մեծ քայլ արին, որովհետև դրանք յաղթութիւնը տարան նրանով որ յաջողաբար Նիւ-Իորկի քաղաքապետին, պ. Էդուարդ Կուպերին, իրանց կանդիդատ նշանակել տալ: Այս վերջինը ծեր դարբին Պետրոս Կուպերի որդին է, որը Նիւ-Իորկի ամենայայնիւ մարդկերանցից մէկն է, և որը Վուպեր գրականական և գիտութեան ճիւղավարժ Դեմոկրատների հիմնադիրն է:

«Վաշինգտոնում դեռ ամեն բան խաղաղ է»:

ԻՏԱԼԻԱ

«Temps» լրագրում կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները.

«Լուցատորին պատգամաւորների ժողովում հարցրեց, որ եթէ Աւստրիայի հետ վաճառականական դաշնադրութիւնը չը յաջողվի, կառավարութիւնը մտադրվի արդեօք այն ժամանակ փոփոխութիւններ անել իրեզնիների ընդհանուր գների մէջ: Սրանից յետոյ նա հարցրեց թէ Ֆրանսիայի հետ առևտրական դաշնադրութիւն կապելուց յետոյ մտադրվի է արդեօք կառավարութիւնը Զվիցերիայի հետ էլ կապել թէ ոչ:

Ֆինանսների մինիստրը պատասխանեց, որ նա ոչ ոքին իրաւունք չէ տալի հարցեր առաջարկել իրան, և ասաց որ, երբ ինքը հարկաւոր կը համարէ այդ հարցմունքներին պատասխանել, այն ժամանակ նա կը յայտնէ այդ մասին: Իսկ այժմ, քանի որ դաշնադրութիւնների մասին առանձին կերպով զբաղված չէ կառավարութիւնը, ուստի ինքն էլ աւելի համարում է մինիստրութեան քաղաքականութիւնը:

«Պ. Մորգինին խօսեց մի շարժումի մասին, որի պատճառով նա պախարակում է մինիստրութեան քաղաքականութիւնը:

«Պ. Բէրտանին իր 21 ընկերների կողմից հաւանութիւն տուեց մինիստրութեան վարմունքին: Մի քանի պատգամաւորներ էլ մինիստրութեան հակառակ համաձայնական պատասխաններ են պատրաստում: Ների վաղը Լուչիպիութիւններ կը լինեն:

«Մտաւայի և Բէլգիայի վաճառականական դաշնադրութիւնը յետաձգվեց մինչև 1879-ի ղեկոնման վերջը:

«Ելեան Ուրուսովը, որ Ռուսաստանի պաշտօնական գործերով երբեմն գտնվում էր Վաշինգտոնում, և որ այս վերջին ժամանակներս Հռոմում էր լինում, յետ կանչվեցաւ իր հայրենիք, Ս. Պետրբուրգը»:

ՖՐԱՆՍԻԱ

«Journ. Offic» լրագրում տպված է, որ նախագահի հրամանով պ. Լէնգլէրը, որ հանքերի ուսումնարանի ղեկավար երկրաչափ է, ժամանակաւորապէս տեսչի պաշտօնակատար է նշանակված բազմաթիւստեան համալսարանում, պ. Օսիան Բոնէի փոխանակ, որին պաշտօնից հրաժարացել են:

«Ս. Օսիանին պաշտօնից հեռացնելու մասին, ասում է «Temps» լրագիրը, մենք լսում ենք հետևեալը:

«Ներկար ժամանակից ի վեր ձայն էր տարածվել, թէ բազմաթիւստեան համալսարանի տեսչի տանը, որ գտնվում է համալսարանի շէնտրալ մէջ, մի կին է բնակվում: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը այս բանաստեղծների վերջ տալու համար, պահանջեց պ. Օսիան Բոնէից, որ նա հեռացնէ այդ կնոջ, բայց այս վերջինը բողոքեց մինիստրի պահանջի դէմ, բացատրելով իր յարաբերութիւնները դէպի այդ կինը. բայց որովհետև մինիստրի պահանջը իսկապէս չէր վերաբերում նրանց առանձին յարաբերութիւններին, և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որով այն ժամանակ դա կը լինէր մի ընտանեկան հետախուզութիւն, ուստի մինիստրը պահանջեց, որ նա անշուշտ հեռացնէ այդ կնոջը, ասելով որ այդպիսի մի բարձր պաշտօնակատար, մանաւանդ, որ նա ազգութիւն է, այնքան զինուորական և աշխարհական ուսանողների մէջ, երբեք թող չը պէտք է տայ որ իր անուանը որ և է արատ գայ:

«Մի քանի ժամանակից յետոյ մինիստրի պահանջը դարձեալ ներկայացրին պ. տեսչին, բայց տեսնելով, որ կինը արդէն հեռացել է, մինիստրը կարծեց որ տեսնու է հեռացրել նրան այլ ևս վէճը չերկարացնելու համար, բայց նրա զարմանքը շատ մեծ եղաւ, երբ տեսաւ որ մի քանի օրից յետոյ կինը դարձեալ վերադարձաւ համալսարանի շէնտրալին:

Մինիստրը ուրիշ միջոց չը գտնելով յարգել տալ իր հրամանը, դիմեց ուղղակի նախագահին և խնդրեց, որ նա բարեհաճէ հրաժարեցնել պ. Օսիան Բոնէին իր պաշտօնից և նրա փոխանակ նշանակել գտնէ ժամանակաւորապէս հանքերի ուսումնարանի ղեկավար երկրաչափ պ. Լէնգլէրին: Հանրապետութեան նախագահը չը կամենալով որ ուսման գործը անկողի լինի համաձայնեց ժամանակաւորապէս պ. Լէնգլէրին տեսուչ նշանակելու:

ՆԱՍՏԱԿ ԹԻԻՐԻՔԻՍՏԻՑ

«Պ. Պալիս, 11 դեկտեմբերի
Մի քանի օր է անշարժութիւն մը տիրած է ազգային գործոց մէջ: Պ. Պէլեանի խնդիրն վեր-

ջանալէ յետոյ երեսփոխանական ժողովոյ հանգիստ առնելու պէտք մը զգաց կարծես, և ալ չը դուժարի, իբր թէ ազգային էական խնդիրներէն կարգադրված լինին: Ազգային վարչութիւնը կը զբաղի օրուան խնդիրներով յորս առաջին տեղը կը բռնէ Երուսաղէմայ վանուց խնդիրն: Այս վանքն որ ազգին մեծ պատիւ է Երուսաղէմայ մէջ, ծանր պարտուց ներքն է և միանգամայն հասոյթներն շատ պակասած են. միաբանութիւնը պ. Պալիսի Ազգ. վարչութիւնէն կը խնդրէ անմիջական դարման ապա թէ ոչ վանքն փակուելու վտանգի կենթարկուի: Պատրիարքարանը Բ. Կրան հետ բանակցութեան մէջ է որ վանուց կալուածներէն տուրք չառնուի:

Զէյթունցի հայերն տակաւին բանտի մէջ են, պատրիարքարանը զանազ կը պահանջէ, Բ. Կրանը կը խոստանայ յանձնել, բայց չը կատարէր: Պատրիարքարանի իրաւունքն է որ եկեղեցականներն ինչ յանցանք ալ ունենան կառավարութեան կողմէն բանտ չը դրուին, այլ Պատրիարքի երաշխաւորութեամբ Պատրիարքարանի յանձնուին: Կիրակի օրն, 10 դեկտեմբեր, մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ ի նպաստ բանտարկեալ զէյթունցիներու հանգանակութիւն եղաւ, Ս. Պատրիարքի կողմէն եկած հրահանգի համաձայն:

Պատրիարք Սրբազանը ամեն առիթէ օգուտ կը քաղէ դեսպանաց հետ միշտ յարաբերութիւններ ունենալ: Իտալիոյ դեսպանի տեղապահ (դեսպանը հոս չէ) մասնաւոր նամակումը հորհակալութիւն յայտնեց է Ս. Պատրիարքի նորա ըրած բարեմաղթութեանց համար Ուսպերթոյ կենաց փրկուելուն համար:

Անգղիոյ Թագուհին աղջկան մահուան առթիւ դարձեալ պ. Չերազ և նախկին պատրիարքական փոխանորդ Տէր-Մկրիան Լէյարդի գացին Պատրիարքի կողմէնց ցաւակցութիւն յայտնելու: Լէյարտ սիրալիք ընդունելութիւն ընելով ասեց է որ «վերաբաւ թագուհին շատ չնորակալ պիտի լինի այս վշտացման պարագայիս մէջ հայ ազգին յայտնած զգացմանց մասին»: Պ. Լէյարտ երկարօրէն խօսած է Հայաստանի ներկայ վիճակին վրայ և ասեց է «բարեկարգութիւններն պիտի սկսեն գործողութիւն մի քանի օրէն. ուշադրութիւն ըրէք, որ չեմ ըսէր քիչ ժամանակէն, այլ քիչ օրէն»:- Տեսնենք:

Այսօր Պալիս հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ պ. Մկրիան փորթուգալեան, «Արարտեան» ընկերութեան վարժարանաց տեսուչ, դեկտեմբերի սկիզբն վաճ մտեր է և կը ձեռնարկէ վարժապետանոցն անմիջապէս բանալու:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հայրենիք» լրագրին Էրզրումից գրում են հետևեալը. «Նախորդ կիրակի նոյ. 19. առաւօտեան եկեղեցւոյ աւարտումէն վերջը, Մ. Փորթուգալեան է. ք. Կրթական ընկերութեան առաջարկութեամբ և խնդրանքով մէկ ժամու չափ առանձնաբեր յԱզգ. վարժարանի, «Եթէ Հայը ինչ պարտի ընել ներկայիս մէջ» նիւթին վերայ, խիստ զեղեցիկ կերպով բացատրելով Հայուն պարտիք, բուն ծախսաւորութեամբ ընդունուեցաւ: Թուեա 4-5 օր առաջ քաղաքէս մէկ ժամ հեռու Մուսուրիկա անուն գիւղին մօտ, հայու մը զուլեւը կը կորսու տաճկաց կողմէն. ոճրագործը ձերբակալուած չեն. քաղաքի մը քովը մինչ այսպիսի բարբարոսութիւնը տեղի կունենան, ուրիշ տեղեր ինչքը չեն գործուիր. տեսնենք քիչ իսմայիլ փաշան ինչ միջոց ձեռք պիտի առնէ. իւր ծանուցեալ թուլութեամբ եթէ դեռ ևս քնանայ, վաղը միւս օր նոյն իսկ քաղաքիս մէջ այսպիսի դէպքեր պատահելուն տարակոյս չը կայ. Աստուած գիշար թշուառ Հայուն: Տեղս խումբ մը եռանդուն երիտասարդ թաւրոն մը հաստատած են և ցարժ քանի մը Ազգ. ներկայացուցիչներ տուած են. յառաջիկայ կիրակիէ ալ տեղոյս Ազգիկէ ամրոցին պատերազմը պիտի ներկայացնեն Տաճիկ բարբառով. զայս հիշելուպէս է Էնվարը Եարգիէ լրագրի խմբագիր Միտհաթ է. ֆէյտի: Մինչև հիմա դեռ ձիւն և ցուրտ չը կայ քաղաքս: Առետուրը այս օրերս կը շարժի փոքր ինչ»:

«Իտալական լրագիրները հաղորդում են, որ նոր մինիստրութիւնը թէ սենատում և թէ ազգային ժողովի մէջ շատ վատ ընդունելութիւն գտաւ: Այդ լրագիրները նոր մինիստրութեան գոյութիւնը անկարելի են համարում: Լրագիրներէն մէկը նոր մինիստրութիւնը (անկման մինիստրութիւն) է անտանում, միւսը ասում է, որ այժման կարիքները անհետացնելու համար բաւական է փչել:

«Times» լրագրին Լատիից հաղորդում են հետևեալը էմիրի հեռանալու մասին. «Էմիրի փախչելու լուրը հաստատվում է: Եսկուր-խանը զանազան ցեղերից իր հօր յաջորդ է ճանաչված: Եսկուր-խանի գործողութիւնների մասին զանազան կարծիքներ կան. Այն իրողութիւնը, որ Շիր-Ալի փախչելու ժամանակ չը հրամայեց զէլ-խանի իր որդուն ցոյց է տալիս, որ նա գիտէր թէ Եսկուր-խանը կը շարունակէ ընդդիմանալ անգլիացիներին: Եսկուր-խանը գուցէ չի համաձայնվի տալ անգլիացիներին այն երկրները, որոնք անհրաժեշտ են սահմանները ուղղելու համար: Նա ասելի շատ համակողմնորդ ունէ, քան թէ իր հայրը»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 դեկտեմբերի: «Голосъ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ ամբողջ Թիւրքիայում մեծ աղքատութիւն է տիրում:

ՓԱՐԻՑ, 21 դեկտեմբերի: «France» լրագիրը հաղորդում է, որ շաբաթ օրը ուղեւորվեցաւ Տունիս մի սուրհանդակ և տարաւ իր հետ Տունիսի բէյին ուղղած Ֆրանսիական կարիքների պաշտօնագիրը: «Liberte» լրագիրը կարծում է, որ անբաւականութիւնը Տունիսի հետ կարելի է վերջացնել դիպլոմատիական ծանապարհով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 դեկտեմբերի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին Բերլինից հեռագրում են, որ այնտեղ սպասում են Ալեքսանդրի մէջ ապստամբութեան ծագելուն և այդ նահանգի Թիւրքիայից անջատվելուն: Իտալացի գործակալները գործում են այդ նպատակին հասնելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 դեկտեմբերի: «Голосъ» լրագրին Կիևից հեռագրում են. «Այսօր զենուորական դատարանում վերջացաւ «Էլեան» Ուրուսով և ընկ. պատրաստած պաքսիմոսները (схары) ընդունող մասնաժողովի գործը: Գիշերվայ 1 ժամին դատարանը մեղադրական վճիռ կարգաց բոլոր հինգ յանցաւորների դէմ: Վճռված է՝ կապիտան Ալեքսանդր Պրոկոպովիչին, որ, յանցանքի սկզբնապատճառ է ծանաչված, զրկել բոլոր աստիճաններից և արտաքսել ծառայութենից, շտաբակապիտան Դոյնիօ Սոնսովիչին (?) և պորպորուչիկ Դոմիտրի Բրեանշտայնին կալանաւորել 2 ամիս 7 օր ժամանակով իւրաքանչիւրին, պորպորուչիկ Իւլիան Լեպինսկին կալանաւորել 2 ամիս ժամանակով, և ծառայութենից դուրս եկած կապիտան իշխան Ուրուսովից 50 ր. տուգանք վերցնել»:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի: «Правда. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Աստրախանում շարունակվում է տարափոխիկ հիւանդութիւնը: Մի քանի կարանտինների վրա խտութեամբ հսկում են:

ՎԻԵՆԱ, 22 դեկտեմբերի: «Polit. Correspond.» լրագիրը հաղորդում է. «Պորթուգալի բնակիչները հեռագրեցին սուլթանին, որ իրանք վճռել են չը հնազանդվել Բերլինի կոնգրեսի այն վճիռներին, որոնք վերաբերվում են իրանց նահանգին: Մի և նոյն ժամանակ Պորթուգալի մէջիւր հրամայեց քանդել Սպուրի այն բնակիչների տները, որոնք գնացին Դանիւօլդըադ Զերոգորիային իրանց հպատակութիւնը յայտնելու համար»:

ՄԱԴՐԻԴ, 23 դեկտեմբերի: Այսօր կատարվեցաւ Մունկասիի պատիժը: ԼՕՆԻՕՆ, 23 դեկտեմբերի: «Standard» լրագիրը հաղորդում է, որ զենեալ Ռոբերտսի զօրաբաժինը զրաւեց Հոստ առանց ընդդիմադրութեան պատահելու: Բնիկները Թըշ-նամաբար են վերվում և հրաժարվում են զօրքերին պաշար հասցնել:

Թ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Ք Պ Ի Ի Ն Ն Ե Ր

ՔԱՐԱՇԱՆԻՍ „ՌՈՒՍՆԱՏԱՆ“ ՇՆՈՏ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՈՒԹՅԱՆԻ ԱՐՈՒԱՐԶՄԱՆԻ ԿՈՒՐՍԷՐԱՆ

ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅԻՐԱՆ—ՇԻՆՈՐ

Տախտաւ Է Շէնհնգի ՊԱՎԻԼԻՍՆՈՒՄ ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂԶ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԴԸ 25 ԿՕՊ, ԻՄԿ ՓԱԲՐ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵՒԻ Է ԳՆԵԼ ԲԱ ԼԱԲԻ
ՄԷԶ ԳՏԵՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ:

Դիօրցօյայեան փորցի լճա ԱՐԳՐՈՒՆՈՒՄ
ԳԱԼԵՐՈՒՄ, Тафлисскія Объявления Լճա-
րի Խմագրատան Դիմացը ԵՒՐՕՊԵ-
ԱԼՆ ԵՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՆ-
ՆՈՒԹՊՈՒՄ ծախվում են ԷժԱՆ ԳԸ-
ՆՈՎ ապակեան (хрустальный) ՃՆՆՈՎԱԿԵԱՆ
(фарфоровый) և Փայեռնեան ապրանքներ
Ռի գնով Գինու բաժանիքի դիմիքը 90 Կ.
—3 ր., Թէյի բաժանիքի դիմ. 1 ր. 30
Կ.—7 ր., օղիի բաժանիքի 80 Կ.—4 ր.,
չայիքիքի 30 Կ.—1 ր. Հաաը, Թէյի Թա-
սեր 3 ր.—12 դիմ., Լամպաների ցիլին-
դրներ 6 Կ.—10 Կ. Հաաը, սեղանի սերվիկ
12 հոգու համար 36 ր.—140 ր., Թէյի սեր-
վիկ նոյնպէս 12 հոգու համար 9 ր.—45 ր.,
ՄԻՒՍ ԱՐԱՆՔՆԵՐԸ ՆՅՆՊԵՍ ԷժԱՆ ԵՆ
ՅԱՐՎՈՒՄ:

ԳՐԻԳՈՐ ՆՇԱՌԻՆԵԱՆԻ
ՊԵՏՐՈՍԻ ՀԵԳՈՒՍՏՆԵ-
ՐԻ ԽՆՆՈՒԹՈՒՄ ԵՐԵԿԵ-
ՆԵԱՆ ՀՐԵՊԵՐԵԿԻ ՎՐԸ
ստացվել էն մեծ քանակությամբ ՅՐԱԿԻ ԵՒ
ՏՐԻԿՈՒ ՍԻՐԻՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որտեղական
ԱՌԱԺՈՏՆԵՐ ԺՈՅՆՆԵՐ,ձեռնային ՊԱԼՏՈՒՆԵՐ և
ՎԱՐՏԻԿՆԵՐ, երկխոսող հազուստներ, վե-
րաբերող ԽՈՒՄԱՏՆԵՐ զարդերով, նոյնպես ըն-
դունվում են ՊԱՍՏԻՔՆԵՐ գլխուսարկան և
քաղաքական հազուստների համար Յոյս ու-
նեմ, որ լինչպես պատուիրողները նոյնպես է
անուանա բԱՌԱԿՆԵ ԿԸ ՄՆԱՆ:

22-75

ՄԵՆԱԿԻ, ԽՄԲԱԳԲԱՏԱՆԸ Հարկաւոր է
ձԷՆ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱՍՈՒՄ, Պաշտօնները մասին
կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան
Ժամի 10-ից մինչև 2 Ժամը կէսօրից յետոյ
ВЪ РЕДАКЦИИ «МПАКЪ» НУ-
ЖЕНЪ РАЗНОШИЕЪ.

Մի դառնայի ԳԱԴԻՆԵՐԵՆ ԼԵՁՈՒՒՐ ԴԱՍԱՌՈՒԹՅԱՆ ՄԷՋ ԸՍՏԱՆ ԽԱՐՎԱՅ ՓՈՐՃ ՈՒՆԵՅՈՂ, ԿԱՄՆԵՈՒՄ Է ՎԱՐԱՍԿԵԼ ԱՅՔ ԼԵՂՈՒՐ ԴԱՍԱՏՈՒՈՒՄԻՔԱՄԲ: ՀԱՐՅՆԵԼ ԱՊ. ԱՅԵՐԻ ՄԱՀԱՂԵՆՈՒՄ, ԱՅԼ ԸՍՏԱՆԴՐԱՆԱՆ ԱՅՔՈՒ ԴԷՄ, ԳՈՂՈՎՆՆԵՐԻ ԱՐՈՍԱԿԷԽՈՒ ՎՐԱ:

3-5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՎԱԶԱՌԱՆՈՑՈՒՄ ԸՆ-
դունվում է ստորագրություն Կ. Պոլսի մե-
տա լրագրին: Տարեկան զինն է Ռուսաստա-
նում: Զ ս ա ն յ ու թ յ: Վ ճ ա ղ լ կանխիկ: Ստո-
րագրվել ցանկացողներին խնդրվում է որ, ա-
ռաջ այստեղ լրացնել ցանկությունը և որոշ հա-
զարվել իրանց բնակություն տեղն և հասցեն:

ՆՈՑՆ ՏԵՂԸ

փաճառվել սկսաւ եղվէջի վարդանանց
 պատմութիւնը Անձևացեաց օրինակից
 տպագրված ընդ վերոհայեցողութեամբ Գ.
 Արքեպ. Այվազեանի:
 Ինքն ընտրի թղթի վրա 1 ր.
 Տաւարակ թղթի վրա 80 Կ.
 Տաւարակ գեղեցեկքն 20% զեջանն կը լինի:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

որ գտնվում էր Գոլգոթինոսկի պրոսպեկտի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նրան ԳՕԼՈՎԻՆՍԿԻ պրոսպեկտի վրա, ՇԻՐՆՎԻ տանը, Գերմանական կրճերի և Վէստյիկի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նրան սանդուղքով Այցելողների համար բաց է ԱՄՆԵ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուն նՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած:

17-25

ԿԻՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Աճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը՝

	Բ.	Կ.	Բ.	Կ.
1. Տիւզէնջեան՝ ծովարարիտուլթիւն կազմ. 78 թ.	2	25	ճանապ. ծախ.	2 60
2. Մերենց՝ Թորոս Լեւոնի, պատ. վեպ	1	"	—	1 20
3. Խուզարաշեան բառգիրք Հայերենից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակահաթիւ).	7	"	—	7 60
4. Ֆրանց Հոֆման՝ Ռոնէ, վեպ.	—	40	—	" 50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	"	—	3 40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ	1	"	—	1 20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи.	"	40	—	" 50
8. Ստացված են բազմաթիւ Հայերէն գրքեր, թէ՛ ինքնուրոյն և թէ՛ թարգմանա- կան, Կ. Պօլտոյ և Ջիւրեանոյ տպագրութիւնը:				
9. Շուտով կը սկսի վաճառվել Նիւէրի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձեաքեանց օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց Հակէկ Նորին Սրբազնութիւնի Դարբիէկ Արքեպիսկոպոս Սյւլպեանը. տպագրված է ամենայն զգուշու- թեամբ և քնտիր թղթի վրա: Հասցէ՝				

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисъ.

ОБЪ ИЗДАНИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИСКИЙ ВѢСТНИКЪ“
ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ кон-
торѣ редакціи на Эриванской площади, № 3.

ОДИННАЦЬНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисъ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу. . .	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тиф-
лисъ въ редакцію **Тифлискаго Вѣстника**.

ОБЪ ИЗДАНИИ
ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ
ГАЗЕТЫ

БАКИНСКАЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цена газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р. на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во все города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домъ Дадашева, на Миллионской улицѣ, близъ гостиницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на $\frac{1}{2}$ года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительно принимается въ конторѣ редакцій
 Артуруи, на Дворцовой улицѣ. что въ Галереѣ



Մենքեան տօներէն Ֆրանսիական ցեղիկ մօտ գտնվող ՀԱՄԵԼԵՆԲԱՆ ՅԱՆ ՀԱՆՆԻՍԻ քաղաքում կը լինի պատկերներէ. ԵՐԿՐՈՐԷ ՓՈՓՈԵՈՒԹԻՒՆ: Ինքի պարզ ցոյց կը տրվի: ԵՐԱՍՏԱԵՄ քաղաքէ պատկերը, ԲԵՐԼԻՆՈՒՆ քաղաքէն, Դաքա պաշտօնէն և վերջէն: ԿՆՈՐՈՒԹԻՒՆ: Մաղիական զարմաշք: Ով որ կը տեսնի, կը ծիծաղի:

ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԱՎԻ Խանութում, Կաստիլ-
չեակայա փողոցի անկիւնում, Շրիովիլ Թան Հան-
դէպ ՍՄՏՅՎԱԾ ԵՆ ԵՆ ԵՆՆԵՐԻ ԿԻՄԻ ՄԵՆ ԸՅԱ-
նակութեան ԵՄ ԵՄԽԱՆԴԵՐԵՐԻ ԿՈՐ ԶԵՆԵՐ ԲՐԻ-
ԼԻԱՆԵՐԻ, ԱՐԾԱԹԵ Ի ՈՍԿԱՅՆ ԻՐԵՂԵՆԵՐԻ, ՆՈՂԻ-
ղԵԱ ԺԵՆԵՎԱՅԵՐԻ ԺԱՄԱՐՏՈՑՅԵՐԻ: ԽԱԿ ԵՄԴ-
ԽԱՆՈՒԹԻ ԿԱՐՏԵՐՈՒ ՍՄՏՅՎԱԾ ԵՆ Կ. Ս. ՊԵՊԵ-
ԼԻ ԲԵՆԵՐ 5000 ՖՈՒՆՏ: ԹԵՂԻ ՖՈՒՆՏԵՐ ԵՄԵՐ ԵՄ
Բ. 40-3 Բ.: ՎԱՃԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ զԻՆՈՒՐ ԿԱՆԿԻ-